«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի

EduArmenia կրթական նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման

դասընթաց 2023

Հետազոտական աշխատանք

<u>Թեմա՝</u> Ինչպե՞ս հեքիաթի հորինումը կնպաստի կրտսեր դպրոցականի մտածողության զարգացմանը

Հետազոտող ուսուցիչ՝ Նունե Սարգսյան

(Հրազդան քաղաքի Վ. Սարոյանի անվան թիվ 11 հիմնական դպրոց)

Հրազդան 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԳԼՈՒԽ 1. Հեքիաթի կարևորությունը երեխայի կյանքում 4
ԳԼՈՒԽ 2. Հեքիաթի հորինման մեթոդներ 9
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 15
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լինելով դասվար՝ միշտ բախվել եմ այն **խնդրի** հետ,թե **ինչպես զարգացնել աշակերտի մտածողությունը կրտսեր դպրոցական տարիքից:**Ըստ այդմ՝ **հետազոտությանս նպատակն է զարգացնել աշակերտի մտածողությունը հենց կրտսեր դպրոցական տարիքից, հասնել նրան, որ նոր-նոր դպրոց ոտք դրած փոքրիկը կարողանա մտածել, արտահայտել իր կարծիքը, վերլուծել, կատարել դատողություններ, նպաստել «ես չեմ կարող հորինել» կարծրատիպի վերացմանը**:

Իսկ ինչպե՞ս հասնել իմ նպատակին, ինչպե՞ս լուծել այս խնդիրը,ո՞րն է իմ խնդրի **վարկածը.**

Լուծման բանալին ես տեսնում եմ նախ հեքիաթներ լսելու, կարդալու, պատմելու, ապա՝ հորինելու մեջ: «Հեքիաթն ակտիվ գեղագիտական ստեղծագործություն է, որը կլանում է երեխայի հոգեկան կյանքի բալոր ոլորտները՝ նրա միտքը, զգացմունքները, երևակայությունը, կամքը»:[1]

Իսկ ինչո՞ւ ընտրեցի հեքիաթը: Այս հարցի մեկնաբանությունը տվել եմ հետազոտական աշխատանքիս **առաջին գլխում**՝ վերհանելով հեքիաթի կարևորությունը երեխայի կյանքում՝ հայտնի հեքիաթասացների և իմ վարկածներն առաջադրելով:

Երկրոդ գլխում մտածողության զարգացման ծանրակշիռ տեղը զբաղեցրել է հեքիաթների հորինումը կրտսեր դպրոցականների կողմից: Որպես հեքիաթների **հորինման միջոց**՝ վերցրել եմ իտալացի մանկագիր Ջանի Ռոդարիի՝ հեքիաթների **«պատճենման», «շուռ տալու», «շիլափլավի», «նոր բառի ներմուծման», «նոր շարունակություն տալու» մեթոդները:**

[1] Վ. Ս. Սուխոմլինսկի, Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան 1977, էջ 211

ԳԼՈՒԽ 1

Հեքիաթի կարևորությունը երեխայի կյանքում

Հեքիաթը բանավոր, արձակ պատմվող հրաշապատում ստեղծագործություն է՝ հիմնված երևակայական հնարանքի վրա, որի բազմապիսի և ավանդական ձևերը չեն կրկնվում բանահյուսության որևէ այլ ժանրում:

Հեքիաթներին հարիր են ոչ միայն բացառիկ դրություններն ու անակնկալները, այլև երևակայական կեղևով պատած ժողովրդական իդեալներն ու գաղափարները, լավագույնն ու բաղձալին, հարուստ կենսափիլիսոփայությունը:

Նկատի ունենալով հեքիաթի գրավիչ բովանդակությունը, նրանում պատկերվող զարմանահրաշ դեպքերը և երեխաների համար մատչելի լեզուն՝ Ուշինսկին գրում է. «Ես ժողովրդական հեքիաթն անհամեմատ ավելի բարձր եմ դասում պաշտոնական գրականության կողմից մանուկների համար գրված բոլոր պատմվածքներից»[2]: Նա գտնում է, որ պաշտոնական գրականության ջանքերով ստեղծված գործերում նկատվում է ինչ-որ արհեստականություն, ուստի այդպիսի ստեղծագործություններն իրենց անբնականության պատճառով Ուշինսկին անվանում է«մանկական դիմակ ծերունական դեմքի վրա…»[3]:

Կապույտ երկնքի խորությանը, աստղերի առկայծմանը, արշալույսի և վերջալույսի վարդագույն ցոլքին, բոսոր մայրամուտին, երկնային լազուրում կռունկների երամին և շատ այլ գեղեցկությունների երեխան հանդիպում է հենց հեքիաթի մեջ և նրա սրտում ծաղկում է գեղեցկությունը: Ինչպես Սուխոմլինսկին է ասում. «Եթե երեխայի սրտում ծաղկի գեղեցկությունը, ապա երեխան աշխարհը կճանաչի ոչ միայն մտքով, այլև սրտով»[4]: Այսինքն, գեղեցկությունը և կենդանի միտքը կապված են միմյանց հետ, ինչպես արևը և ծաղիկները:

Կարևոր է, որ հեքիաթներ երեխան կարդա կրտսեր դպրոցական տարիքում՝ նյարդային համակարգի ձևավորման շրջանում, երբ երեխայի հոգին շատ նրբազգաց է մտքերի, պատկերների և այն ամենի հուզական նրբերանգների նկատմամբ, ինչ երեխան տեսնում, ընկալում է, ինչի մասին մտածում է:

---

[2] Ուշինսկի, Մանկավարժական ընտիր երկեր, 1959, հ.-11, էջ 637

[3] Հովասափյան Հ. Ն., Գրականության ուսուցման հարցեր: Հոդվածների ժողովածու, Երևան 1979, էջ 151

[4] Սուխոմլինսկի Վ. Ս., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան 1977, էջ 203

Հեքիաթների մեջ տեսնելով ժողովրդի հանճարի ուժը, նրա հզոր երևակայությունը՝ Ուշինսկին դրանք անվանում է «ժողովրդական մանկավարժության փայլուն փորձեր, որի հետաքրքրական սյուժեն համակում է երեխայի էությունը, իսկ հաճախ կրկնվող բառերն ու դարձվածքները երեխային ոչ միայն լեզու են սովորեցնում, այլև նկարագրվող դեպքերն ու հերոսները չափազանց արագ կերպով տպավորվում են նրա հիշողության մեջ՝ իրենց բոլոր գեղեցիկ հատկություններով»[5]:

Հեքիաթի առանձնահատկություններից մեկը նրա սյուժեի պարզությունն է չքողարկված նկարագրությունները, որի հետևանքով հստակ և պարզորոշ երևում են դրական և բացասական հերոսները: Հեքիաթը կարդալուց հետո երեխաները կարողանում են իսկույն կողմնորոշվել դեպի իրենց սիրելի հերոսը և հետևել նրա արկածային կյանքին:

Հայտնի է, թե ինչքան կարևոր նշանակություն ունեն փոքրիկի համար քնելուց առաջ մոր կողմից պատմվող հեքիաթները: Ղազարոս Աղայանը նշում է. «Իմ պատկերացմամբ հեքիաթը շատ և շատ նման է մայրական կաթին.կաթը կորչում է,բայց նրա արդյունքը չի կորչում: Հեքիաթը մեր տաղանդի, մեր երևակայության կաթն է: Իմ նպատակն է հեքիաթի միջոցով հեքիաթային աշխարհ մտցնել փոքրիկին,որպեսզի նա մտնի դրական հերոսի դերի մեջ, լինի նրա պես բարի, քաջ ու ազնիվ»[6]: Եթե փոքրիկի համար մայրական կաթն անհրաժեշտ է նրա ֆիզիկական զարգացման համար,ապա հեքիաթը նրան անհրաժեշտ է հոգեկան զարգացման և հոգևոր սնունդ ստանալու համար:

Է՞լ ինչի համար է հեքիաթը: Նրա համար, որ երեխան իր ինտելեկտի կառուցվածքը վերարտադրի, տարբեր կարգի կապեր ստեղծի՝ «ես և ուրիշները», «ես և իրերը», «իրական և հորինածո իրերը»: Հեքիաթը նրան հարկավոր է, որպեսզի տարածության («հեռու-մոտիկ») ու ժամանակի (« վաղուց-հիմա», «առաջ-հետո», «երեկ-այսօր-վաղը») մասին գաղափար կազմի: Հեքիաթի ավանդական սկիզբը՝ «ժամանակով», «լինում է, չի լինում» իրական պատմության «դա այսինչ ժամանակ է եղել»-ից ոչնչով չի տարբերվում, թեև հեքիաթի աշխարհը տարբեր է նրանից, ուր

[5] Հովասափյան Հ. Ն., Գրականության ուսուցման հարցեր: Հոդվածների ժողովածու, Երևան 1979, էջ 150
[6] Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա.-Երևան 2006, էջ 176

ապրում է (և երեխան շատ շուտ է դա պարզում): Երեք տարեկան աղջնակի հետ զրուցելիս Ջանի Ռոդարին պարզել է, որ նա չի ուզում ամուսնանալ, որովհետև հեքիաթում չի ապրում, այլ «իսկականից»: Ամուսնանալը աղջնակի համար հեքիաթ էր. չէ՞ որ հարսանիքը հեքիաթի ավանդական վերջաբանն է, բոլոր արքայադուստրերի և արքայազների ճակատագիրը, որոնք այլ աշխարհում են ապրում՝ ոչ այնտեղ, ուր այդ աղջնակը:

Հեքիաթը բնավորությունների և ճակատագրերի ծով է, որից երեխան իրեն դեռևս անծանոթ իրականության, ապագայի գծերի մասին (որի շուրջ դեռևս չի կարող խորհրդածել) տեղեկություններ է ստանում: Կարելի է ասել, որ հեքիաթը երեխայի համար այս դեպքում կհամարվի այն անցաթուղթը, առանց որի նա չի կարող ներթափանցել դեպի կյանք: Որպեսզի երեխան կարողանա ապրել այս աշխարհում, պետք է քիչ թե շատ ծանոթ լինի այնտեղ կատարվող անարդարություններին և կարողանա դիմակայել դրանց: Բայց քանի որ նա դեռևս մանուկ է, պետք է նրան աշխարհի անցուդարձին ծանոթացնել հեքիաթի միջոցով, որ նա չվախենա կյանքից, այլ հավատա, որ դժվարությունները կարելի է հաղթահարել ուժով և խելքով, որ միշտ բարին հաղթելու է չարին, ինչպես հեքիաթում: Իտալացի մանկագիր, մանկավարժ Ջանի Ռոդարին պնդում է, որ «երեխաների հետ պետք է խոսել ինչպես չափահասների հետ, նրանց հնարավորինս մեծ ինքնուրույնություն, սեփական «ես»-ը զարգացնելու ասպարեզ տալ:Եվ ինչպես չափահասների հետ, չպետք է որևէ թեմայի քննարկումից խուսափել, այլ գտնել դրանց լուծման համար ձևեր»[7]: Իսկ Իտալո Կալվինոն նշել է. «Հեքիաթը երեխային մարդկանց կյանքին, մարդկային ճակատագրերի աշխարհին, պատմության աշխարհին հաղորդակից դարձնելու միջոց է»[8]: Այսպիսով, «Հեքիաթները երեխայի համար յուրահատուկ աշխարհ են ստեղծում,մեզանից ամուր վարագուրված ինչ-որ թատրոնիկ: Աշխարհ, ոչ թե կրկնօրինակելու համար, այլ՝ դիտելու»:[9]

Որպեսզի կարողանանք իմանալ հեքիաթի դերը երեխայի կյանքում, պետք է ծանոթ լինենք նրա հոգեբանությանը: Թումանյանը մանկական հոգեբանության

---

[7]Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, 20-րդ դարի մանկավարժական տեսություններ, Ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար, Երևան 2005, էջ 192

[8] Ռոդարի Ջ., Ստեղծագործական երևակայության քերականություն, Երևան 1995, էջ 162

[9] Ռոդարի Ջ., Ստեղծագործական երևակայության քերականություն, Երևան 1995, էջ 162

ամենակարևոր գիծը համարում է խաղը, երևակայությունը, հեքիաթը: «Մանկությունը մարդու կյանքի էն ամենաընդունակ շրջանն է, երբ նա չորս կողմից ընդունում է, սնունդ է առնում ու զարգանում շարունակ… Խաղը նրա՝ մանուկ մարդու, բնական, օրգանական պահանջն է, նրա լրջությունն է, նրա էությունն է: Խաղում է նրա մատաղ կյանքի ամեն մի մասնիկը, խաղում է նրա թրթռան սիրտը ջահել կյանքի մեջ, ու կյանքում ամեն բանի նա խաղով է մոտենում, խաղով է քննում, խաղով է ճանաչում ու ընդունում: Դա նրա ձևն է, նրա մեթոդն է»[10]: Երեխայի համար հեքիաթը խաղի պես լուրջ և իսկական գործ է. դա նրան պետք է կողմնորոշվելու, իրեն ուսումնասիրելու, իր հնարավորությունները չափելու, գնահատելու համար: Օրինակ՝ վախը դիմակայելու,իր կարողությունը չափելու համար: Հեքիաթի կառուցվածքի մեջ երեխան սեփական երևակայության կառուցվածքն է տեսնում, և որ նա միաժամանակ իր ներսում դա զարգացնում է աշխարհի ճանաչողության, իրականությանը տիրապետելու համար անհրաժեշտ միջոցներից մեկն ստեղծելով: Երեխան այդ տարիքում ինքն է փնտրում այն սնունդը, որն իրեն անհրաժեշտ է զարգանալու համար: Իսկ Թումանյանը գրում է. «Մինչդեռ մենք նստած մտածում ենք «ինչպիսի՞ սնունդ տալ և ի՞նչ ձևով տալ» հանելուկի վրա, ինքը՝ մանուկ հասակը, ցույց է տալիս էն հրաշալի ձևը ու ամեն տեսակի սնունդ էլ պահանջում է իր ուզած ձևով՝ խաղով»[11]: Քանի որ հեքիաթն էլ իր հերթին երեխայի համար խաղ է, ապա դժվար չէ կրկին գալ այն համոզման,որ երեխայի հոգևոր աշխարհի զարգացման համար անհրաժեշտ սնունդը հենց հեքիաթն է՝ զուգորդված խաղի միջոցով:

«Եթե դուք ուզում եք, որ երեխաները ստեղծագործեն, ստեղծեն գեղարվեստական կերպարներ, տեղափոխեցեք ձեր ստեղծագործական կրակից թեկուզ մի փոքրիկ կայծ երեխայի գիտակցության մեջ»[12]:

Քանի որ հեքիաթներ հորինելը իրենից բավականին բարդ գործընթաց է ներկայացնում, և, որպեսզի այդ աշխատանքը մեխանիկորեն չկատարվի երեխայի կողմից, պետք է ստեղծել համապատասխան միջավայր: Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է ունենա փոքրիկ սենյակ կամ դասարանի մի անկյուն, որտեղ կիրականացվեն երեխաների ստեղծագործական աշխատանքները: Այն անհրաժեշտ է կահավորել

[10] Թումանյան, Ուսումնասիրություններ և հրապարակումներ, Երևան 1983,էջ 90
[11] Թումանյան, Ուսումնասիրություններ և հրապարակումներ, Երևան 1983, էջ 91
[12] Սուխոմլինսկի Վ. Ս., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան 1977, էջ 208

աշակերտների հետ միասին՝ հաշվի առնելով նրանց կարծիքը՝ հնարավորին չափ հեքիաթային աշխարհի տպավորություն ստանալով: Օրինակ, մի անկյունում անտառ է,որտեղ ցցերի վրա շինված խրճիթն է, իսկ ցցերը հիշեցնում են հավի ոտքեր, մյուս անկյունում գեղեցիկ նախշերով գորգ է փռված, որը կախարդական գորգի տպավորություն է թողնում, ամբողջ տարածքում բազմագույն բարձեր են դրված, որոնց վրա երեխաները կարող են հարմարավետ տեղավորվել՝ իրենց ձեռքի տակ ունենալով բազմապիսի խաղալիքներ: Այս ամենը աշխուժացնում է երեխայի միտքը և նա ձգտում է բառերով նկարագրել այն, ինչ ստեղծել է երևակայությունը:

ԳԼՈՒԽ 2

Հեքիաթի հորինման մեթոդներ

«Եթե ցանկանում ենք երեխային մտածել սովորեցնել, ապա նախ և առաջ պետք է հորինել սովորեցնենք»[13]: «Հեքիաթը, խաղը, երևակայությունը մանկան մտածողության, ազնիվ զգացմունքների և ձգտումների կենսատու աղբյուրներ են: Բազմամյա փորձը վկայում է և համոզում, որ գեղագիտական,բարոյական և մտավոր զգացմունքները, որոնք երեխայի հոգում ծնվում են հեքիաթային կերպարների տպավորության տակ, ակտիվացնում են մտքի հոսանքը, որն ակտիվ գործունեության է մղում ուղեղը, լիարյուն թելերով կապում մտածողության կենդանի կղզյակները»[14]: Հեքիաթային կերպարների միջոցով երեխայի գիտակցության մեջ է թափանցում բառը՝ իր նրբագույն երանգներով. այն դառնում է երեխայի հոգեկան կյանքի ոլորտը, մտքերն ու զգացմունքներն արտահայտելու միջոց՝ մտածողության կենդանի իրականություն: Հեքիաթային կերպարների առաջացրած զգացմունքների ազդեցությամբ երեխան սովորում է մտածել բառերով: Առանց կենդանի, վառ, երեխայի գիտակցությանն ու զգացմունքներին տիրող հեքիաթի՝ մտածողությունն ու մանկական խոսքը՝ որպես մարդու մտածողության հնարավոր չէ պատկերացնել մանկան ու խոսքի որոշակի աստիճան: Երեխաները մեծ բավականություն են ստանում այն բանից,որ իրենց միտքն ապրում է հեքիաթային կերպարների աշխարհում:

Քննարկենք մեթոդներ, որոնք կիրառելով կարելի է միանգամից «շարժի գցել» երեխայի միտքը:

<u>Նոր բառի ներմուծման մեթոդ:</u> Այս մեթոդի կիրառման ժամանակ աշակերտին շատ ծանոթ որևէ հեքիաթի սյուժեն հուշող հինգ բառ ենք տալիս:Օրինակ «Կարմիր Գլխարկ»-ից՝ աղջիկ, անտառ, որսորդ, գայլ, տատիկ բառերը և վեցերորդ՝ հեքիաթի հետ ընդհանրապես կապ չունեցող, ասենք, ուղղաթիռ բառը: Աշակերտները պետք է այս վեց բառերով հեքիաթ հորինեն: Իսկ հեքիաթի մեջ գործածված ամեն մի բառ իր կարևոր նշանակությունն ունի երեխայի մտածողության զարգացման գործում,

[13] Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, 20-րդ դարի մանկավարժական տեսություններ, Ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար, Երևան 2005, էջ 190

[14] Սուխոմլինսկի Վ.Ս., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան 1977, էջ 202

նրանցից յուրաքանչյուրն անմահ որմնանկարի մի նրբագիծն է: Ու սկսվում է բազմատեսակ ու բազմաձայն հեքիաթների չքնաղ շքերթը: Օրինակ, ըստ երրորդ դասարանի աշակերտներիցս մեկի հորինած հեքիաթի, որսորդները ուղղաթիռով վերևից նկատել են անտառով տատիկի տուն գնացող աղջկան հետապնդող գայլին, իջել են և ուղղաթիռով աղջնակին հասցրել տատիկի մոտ, ապա՝ ողջ ու առողջ վերադարձրել տուն: Իսկ գայլը ուղղաթիռի ձայնից խլացել է՝ պատժվելով իր չար մտադրության համար: Պարզ երևում է, որ հեքիաթ ներմուծված մեկ բառն անգամ կարողացել է լիովին փոխել ամբողջ սյուժեն՝ տալով նրան նոր ընթացք և զարգացումներ: Այստեղ երեխան մտածում է, նրա ուղեղի կիսագնդերի կեղևի նյարդաբջիջների մի որոշակի խումբ ընկալում է շրջապատի աշխարհի պատկերները և տալիս է ազդանշանները, համակարգում, խմբավորում, համադրում, համեմատում և դրա հետ մեկտեղ ընկալում նորանոր պատկերներ և վայրկենաբար նորից անցնում դրանց մշակմանը: Նյարդաբջիջների այս արագ անցումն էլ հենց այն երևույթն է, որն անվանվում է միտք՝ երեխան մտածում է: Սա նշանակում է, որ մանկական ուղեղի բջիջներն այնքա՛ն նուրբ են, որ նրանք կարող են աշխատել այն դեպքում, եթե ընկալման օբյեկտ է այն պատկերը, որը կարելի է տեսնել, լսել, որը կարելի է շոշափել: Մտքի նորանոր փոփոխումները, որ մտածողության էությունն են կազմում, հնարավոր է միայն այն ժամանակ, երբ երեխայի առջև կա՛մ ակնառու, ռեալ պատկերն է, կա՛մ էլ այնքան պայծառ է ստեղծված բանավոր պատկերը, որ երեխան կարծես տեսնում, լսում, գիտակցում է այն, ինչի մասին պատմում են: Ահա սա է պատճառը, թե ինչու են երեխաները այդքան սիրում հեքիաթը: «Առանց հեքիաթի, շրջապատի աշխարհը երեխայի համար վերածվում է մի գեղեցիկ, բայց, այնուամենայնիվ, կտավի վրա պատկերված նկարի, հեքիաթը այդ նկարին ստիպում է վերակենդանանալ: Հեքիաթը, պատկերավոր ասած, մի թարմ հողմ է, որը բորբոքում է մանկական մտքի և խոսքի կրակը»[15]:

<u>«Շուռ տալու» մեթոդ:</u> Հեքաթների հորինման այս մեթոդի էությունը հեքիաթի թեման մտացածին կամ առավել օրգանապես «շուռ տալն» է. ամեն ինչ ըստ նախնական տարբերակի է, բայց կարծես հայելու մեջ է. ինչը որ աջից էր, ձախից է դառնում և հակառակը: Օրինակ՝ Կարմիր Գլխարկը չար է, իսկ գայլը՝ բարի:Ըստ երեխաների

[15] Սուխոմլինսկի Վ.Ս., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան 1977, էջ 32

հորինած հեքիաթի՝ չար Կարմիր Գլխարկը տատիկի տուն գնալու ճանապարհին գրպանում թաքցրած թույնով թունավորում է կարկանդակները: Այդ ամենը տեսնում է բարի գայլը և շնչակտուր հասնում տատիկի տուն՝ պատմելով կարկանդակների մասին: Երբ թոռնիկը հասնում է, տատիկը դուռը չի բացում: Տունդարձի ճանապարհին գայլը խրատում է աղջկան: Վերջինս ընդունում է իր սխալը, և նրանք ընկերանում են:

Իսկ «Մոխրոտը» հեքիաթում, Մոխրոտը՝ անպետք այդ աղջիկը, մեղմ ու բարի խորթ մորը միշտ զայրացնում է և հեզ ու հնազանդ խորթ քույրերի փեսացուին խլում…

Կամ՝ Ձյունանուշիկը թավ անտառում ոչ թե յոթ թզուկների, այլ յոթ հսկաների է հանդիպում և նրանց ավազակային կողոպուտների մասնակիցը դառնում:

Այսպիսով, «շուռ տված» հեքիաթ ստեղծելու մեթոդը նոր մտքի է բերում, ինչ-որ նկարի ուրվագիծ նշում: Արդյունքը մասնակիորեն, թե լրիվ նոր բան է լինում՝ կախված նրանից, թե «շուռ տալու» սկզբունքը տվյալ հեքիաթի մե՞կ, թե՞ բոլոր տարրերի նկատմամբ է կիրառված լինում:

<u>Նոր շարունակություն տալու մեթոդ:</u>

-Իսկ հետո՞,-հարցնում է երեխան, երբ պատմողը լռում է: Հեքիաթը վերջացել է, սակայն հետո ասելիքի մասին միշտ տեղ կա:

«Մոխրոտի» հայտնի «շարունակությունը» կա: Արքայազնի հետ ամուսնանալուց հետո էլ Մոխրոտն իր հին սովորություններից չի հրաժարվում. թափթփված հագուստով ու մազերով, կեղտի մեջ կորած գոգնոցով անընդհատ խոհանոցում,գազոջախի մոտ է, ավելը ձեռքից բաց չի թողնում: Մի քանի շաբաթից Արքայազնին նման կինը հոգնեցնում է: Իսկ նրա խորթ քույրերը, որոնք պարերի, կինոյի, ճանապարհորդությունների մեծ սիրահար էին, կարողանում են գայթակղել Արքայազնին և խլում Մոխրոտի ձեռքից: Վերջինս էլ, չկարողանալով հանդուրժել այս ամենը, խանդի հողի վրա ամեն տեսակ ելևէջներով իսկական ողբերգության հեղինակ է դառնում և հայտնվում բանտախցում: Ես հարցրեցի, թե ինչու այսքան դաժան վերջաբան՝ սիրելի հերոսուհու համար, իսկ աշակերտներս՝ միևնույն է դուրս կգա բանտից, և բարին կհաղթի չարին, ինչպես բոլոր հեքիաթներում:

Հետաքրքիր է նաև ներկայացնել «Անբան Հուռու» շարունակությունը աշակերտների աչքերով: Այստեղ Հուռու ամուսինը պատահականորեն լսում է մոր և աղջկա գաղտնի խոսակցությունը, որում Հուռին մորը պատմում է գորտերի, խալիչա գործելու, վաճառելու և ոսկու մասին: Հասկանալով, որ ինքը խաբեության զոհ է դարձել, Հուռուն վռնդում է տնից և ամուսնանում աշխատասեր և բարի ուրիշ աղջկա հետ՝ ապրելով երկար ու բախտավոր:

Նմանատիպ վերջաբան Հուռու համար ընտրելով՝ հասկանալի է դառնում, որ աշակերտները փորձել են վերականգնել արդարությունը, որից իրական տարբերակի մեջ ամբողջ կյանքի համար պետք է զրկված մնար նրա խեղճ ամուսինը:

<u>Հեքիաթների</u>«<u>շիլափլավ</u>»: Այս մեթոդի էությունն այն է, որ վերցնում ենք հայտնի մի քանի հեքիաթներ, բոլորի հերոսների ճակատագրերը միացնում ենք իրար և ստանում բոլորովին այլ սյուժե և բովանդակություն ունեցող հեքիաթ՝ հագեցած բազում դեպքերով ու իրադարձություններով: Օրինակ՝

Անտառում Կարմիր Գլխարկը Մատնաչափիկին ու նրա եղբայրներին է հանդիպում: Նրանց արկածներն իրար են հյուսվում և նոր հունով ընթանում՝ մի կետով կիրառված երկու սյուժեի համազորի նմանողությամբ: Կամ՝ Պինոքիոն հայտնվում է Յոթ Թզուկների տնակում և դառնում Զյունանուշի (Սպիտակաձյունիկի) ութերորդ սանը: Մեկ այլ հեքիաթում Մոխրոտի հետ ամուսնացած նույն Արքայազնը հաջորդ օրը համբույրով արթնացնում է չար կախարդի քնեցրած Զյունանուշին: Իսկ այս խառնաշփոթի մեջ իրար հետ խիստ կռվում են թզուկները, խորթ քույրերը, բարի ու չար կախարդները, թագուհիները…

Որոշ աշակերտներ էլ փորձել են այս անգամ էլ միացնել «Անբան Հուռու», «Սուտասանի», «Տերն ու Ծառայի» հերոսների ճակատագրերը՝ օգտվելով «շիլափլավ» մեթոդից: Ըստ այդ հեքիաթի՝ նույն ինքը՝ «Սուտասանը» հեքիաթի թագավորը, կնոջ մահից հետո սիրահարվում է Անբան Հուռու մորը, ամուսնանում նրա հետ, Հուռուն էլ հետը տանում իր թագավորական պալատ և հրաման արձակում, թե ով մի այնպիսի սուտ ասի, որ ինքն ասի սուտ է, կամուսնանա Հուռու հետ և կարժանանա իր պալատում ապրելու պատվին և իր թագավորության կեսին: Այդ լուրը լսում են «Տերն ու Ծառան» հեքիաթի եղբայրները: Մեծը գնում է և չի կարողանում ստել, իսկ փոքր եղբայրը թագավորին ասում է, որ մի կոտ ոսկի է թագավորն իրեն պարտք:

Թագավորը չի հավատում, բայց քանի որ չի ցանկանում իր թագավորության կեսը տալ, փոքր եղբորը տալիս է մի կոտ ոսկի, իսկ Անբան Հուռուն էլ ամուսնացնում նրա հետ: Տուն վերադառնալով՝ փոքր եղբայրը ոսկին կիսում է իր և եղբոր միջև, իսկ իրենց համար՝ մի ծառա վարձում,որ տան գործերով զբաղվի, որ իր կինը հանկարծ շատ աշխատելուց բզեզ չդառնա…

Հեքիաթների հորինման մյուս մեթոդը կոչվում է «պատճենում», որի դեպքում հին հեքիաթից տարբեր աստիճանի ծանոթ կամ լրիվ օտար հողի վրա տեղափոխված մի նոր հեքիաթ է ստացվում: Հանրաճանաչ հեքիաթն է վերցվում և մերկ սխեմայի միջոցով հիմնական սյուժետային գծերի վերածվում: Օրինակ՝

Քույր ու եղբայր «Հենզելն ու Գրետելը» անտառում մոլորվեցին: Նրանց իր տանն օթևան տվեց չար կախարդը, որը որոշեց երեխաներին վառարանում եփել: Սա Հենզելն ու Գրետելը հեքիաթի հիմնական սյուժեն է, կարելի է ասել՝ «մերկ» սխեման: Որպեսզի սյուժեն առավել վերացարկվի, կարելի է կատարել նաև երկրորդ գործողությունը. Ա-ն ու Բ-ն Գ-ում մոլորվեցին: Դ-ն նրանց տեղ տվեց, որտեղ վառարան Զ –ը կա: Երկրորդ գործողության միջոցով երեխան պարզ տեսնում է, թե ինչը պետք է թողնի և ինչը պետք է փոխի: Նա տեսնում է, որ պետք է այս մեթոդով հեքիաթի ստեղծման համար վերցնի ցանկացած Ա և Բ օբյեկտներ, որոնք պետք է Գ վայրում մոլորվեն, որտեղ նրանց ինչ-որ մեկը, այսինքն Դ-ն, տեղ տա Ե-ում, որտեղ անպայման Զ-ը վառարան կա: Ահա նոր սյուժեն աշակերտներիս պատկերացումներով՝

Քույր ու եղբայր մենակ հայտնվում են մանկատանը: Մայրը նրանց լքել էր ապրուստի միջոց չունենալու պատճառով: Վախեցած երեխաները որոշում են փախչել, ու հայտնվելով անծանոթ մի փողոցում՝ մոլորվում են: Նրանք գիշերն ինչ-որ մեկի բակում՝ դատարկ արկղերի մեջ են թաքնվում ու քնում: Ինչ-որ բանի համար բակ դուրս եկած հացթուխը նրանց հայտնաբերում է, օթևան տալիս և շիկացած վառարանի մոտ տաքացնում… Եվ քանի որ հացթուխը զավակներ չի ունենում, նրանց որդեգրում է և միասին ապրում են առողջ ու երջանիկ:

Առաջարկել եմ նաև «Կարմիր Գլխարկի» մերկ սխեման դուրս բերել, և ստացվել է նոր նոտաներով հարուստ հեքիաթ: Ա-ն ցանկանում է գնալ Բ-ի տուն, ճանապարհին հանդիպում է Գ-ին, որը փորձում է վնասել Ա-ին, հայտնվում է Դ-ն և

օգնում Ա-ին: Ըստ այդ հեքիաթի՝ Փոքրիկ նապաստակը որոշել էր գնալ մայր նապաստակի մոտ, որն առավոտյան գնացել էր կեր ճարելու: Նա, քանի որ շատ փոքր էր, չէր մտածում վտանգների մասին. և ահա ճանապարհին հայտնվում է խորամանկ աղվեսը և փորձում նրան մոլորեցնելով՝ իմանալ նաև մայր նապաստակի տեղը և երկուսին էլ ուտել: Բայց այս մոտերքում գտնվող հովվի շունը փրկում է նապաստակներին, իսկ աղվեսին այնպես է վախցնում, որ նա այլևս չի համարձակվում այդ կողմերում երևալ:

«Պատճենում» մեթոդով հեքիաթ հորինելու դժվարությունը կայանում է նրանում, որ աշակերտը պետք է կարողանա նախ և առաջ խորությամբ հասկանալ հեքիաթը, տարանջատել գլխավորը երկրորդականից, տեսնել հերոսների միջև եղած կապերը, դեպքերի պատճառահետևանքային հաջորդականությունը, հետո դուրս բերել մերկ սխեման: Իսկ այս ամենը իրենից բավականին բարդ գործընթաց է ներկայացնում: Դրա համար էլ, երբեմն, գործընթացն ավելի հեշտացնելու համար սխեման առաջարկվում է իմ կողմից: Օրինակ «Տերն ու Ծառան» հեքիաթի մերկ սխեման. Ա-ն ու Բ-ն որոշում են աշխատել: Բ-ն տանն է մնում, Ա-ն աշխատում է Գ-ի մոտ,որը ստում է նրան: Բ-ն է գնում աշխատում Գ-ի մոտ, որին չի հաջողվում ստել Բ-ին: Նմանատիպ մի քանի սխեմա առաջարկելուց հետո, երբ տեսնում ենք,որ առանց մեր միջամտության կրտսեր դպրոցականը կարողանում է ինքնուրույն ցանկացած հեքիաթի սխեման դուրս բերել և իր իսկ կողմից առանձնացրած «կմախքի» հիման վրա ստեղծել նորը, իրենը, ուրեմն կարելի է ասել, որ նա կարողանում է մտածել, որևէ նյութի շուրջ կապեր ստեղծել, փոփոխել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտության առնելով և ավարտելով այս նյութը՝ եկել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Թեման երբեք չի կորցնում իր արդիականությունը, քանզի երեխայի ուղեղը միշտ զարգացման գործընթացի մեջ է, հետևաբար պետք է մեթոդների բազմազանությամբ նպատակին հասնելու ուղիներ փնտրել:
2. Հեքիաթը ես համեմատում եմ սոսնձի հետ, որն իրար է կապում մտածողության զարգացման նուրբ թելերը:
3. Կրտսեր դպրոցականի կողմից հեքիաթների հորինումն արդյունավետ իրականացնելու համար պետք է համապատասխան միջավայր (սենյակի կահավորում) ձևավորենք:
4. Կրտսեր դպրոցականների ուսուցման գործընթացում հեքիաթը համարվում է տրամաբանական, ճանաչողական, խոսքային ընդունակությունների բացահայտման ու զարգացման միջոց: Կարդալով երեխաների կողմից հորինված հեքիաթները՝ տեսնում ենք, որ հեքիաթը և երևակայությունը մի այնպիսի բանալիներ են, որոնց միջոցով կարելի է բացել երեխայի մտքի և խոսքի ակունքները՝ զարգացնելով նրանց մտածողությունը:
5. Երկրորդ գլխում նկարագրված մեթոդներով հեքիաթներ հորինելու շնորհիվ, աշակերտը նորովի է վերապրում իրեն արդեն շատ հայտնի իրավիճակը, հեքիաթին նոր ընթացք տալիս, որն էլ ստիպում է կյանքի դժվար իրավիճակներում շուտ կողմնորոշվել, հեշտ ելքեր փնտրել, վերլուծել և դատողություններ կատարել:
6. «Աշխարհին կարելի է ուղիղ, բայց և անդրամպային բարձունքից նայել: Իրականության մեջ կարելի է շքամուտքից մտնել, բայց կարելի է և օդանցքից ներս սողոսկել, որն անհամեմատ ավելի զվարճալի է»[16]: Ուսուցիչներիս խնդիրն էլ հենց «օդանցքի» տեղը ցույց տալու մեջ է, քանզի «շքամուտքի» տեղը բոլորն էլ գիտեն:

[16] Ռոդարի Ջ., Ստեղծագործական երևակայության քերականություն, Երևան 1995, էջ 34-35

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան 2006

2. Թումանյան, Ուսումնասիրություններ և հրապարակումներ, Երևան 1983

3. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, 20-րդ դարի մանկավարժական տեսություններ, Ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար, Երևան 2005

4. Հովասափյան Հ. Ն. Գրականության ուսուցման հարցեր: Հոդվածների ժողովածու, Երևան 1979

5. Ռոդարի Ջ., Ստեղծագործական երևակայության քերականություն, Երևան 1995

6. Սուխոմլինսկի Վ. Ս., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան 1977

7. Ուշինսկի, Մանկավարժական ընտիր երկեր, 1959